

Որո՞նք են թոքախտի վարակումի դեղերու հնարատր կողմնակի հետեւանքները?

Դեղահատերուն կողմնակի հետեւանքները հազուագիւտ են, բայց կրնան ընդգրկել.

- Միրտիառնուր
- Փսիսում
- Մուր զոյնով մեզ
- Մորթի քերուրտուր
- Դեղին սորթ եւ/կամ աչքեր
- Ախորժակի կորուստ
- Թմրած ձեռքեր եւ/կամ ոտքեր

Եթէ այս կողմնակի հետեւանքներէն մէկը ունենաք, անմիջապէս իմացուցէք ձեր բժիշկին, հիւանդապահուիչին կամ Հանրային Առողջապահութեան բաժանմունքի մարզուած առողջապահական աշխատողին:

Հանրային Առողջապահութեան նախարարութիւնը ի՞նչ դեր պիտի խաղայ:

Բաժանմունքը ձեզմով ու ձեր ընտանիքով մտահոգուած է եւ բուժում կը մատուցանէ թոքախտի վարակումի համար: Եթէ Հանրային Առողջապահութիւնը բուժում կը տրամադրէ ձեզի, դուք կրնաք քննուիլ բժիշկի մը կամ թոքախտի ընդարձակուած դերով հիւանդապահուիչի մը կողմէ (ERN): ERNը գրանցուած հիւանդապահուիչի մըն է, որ յատուկ մարզում ստացած է թոքախտի վարակում կամ գործօն թոքախտ ունեցող հիւանդներու պարագաները վարելու համար: Այս սպասարկութիւնը միայն կը մատուցուի Լոս Անձելըս շրջանի Հանրային Առողջապահութեան բաժանմունքին կողմէ:

Թոքախտի մասին յաւելեալ տեղեկութեան համար, այցելեցէք www.publichealth.lacounty.gov/tb



Թոքախտի վարակում

Ի՞նչ պետք է գիտնաք առողջ ըլլալու համար




Ի՞նչ է թոքախտի վարակումը

Եթե թոքախտի վարակում ունիք, թոքախտի մանրէները ներկայ են, բայց կը «քնանան» ձեր մարմնին մեջ: Եթե թոքախտի վարակում ունիք, ախտանիշեր պիտի չունենաք, հիանալ չէք զգար եւ թոքախտի մանրէները չէք կրնար տարածել այլ մարդոց: Սակայն, եթե ձեր դիմադրական համակարգը տկարանայ, այս թոքախտի մանրէները կրնան «արթննալ» եւ բազմանալ: Այն ատեն գործոն թոքախտէ կրնաք հիւանդանալ: Եթե գործոն թոքախտ ունիք, ձեր ախտանիշերէն են զօրաւոր հագը, գիշերային քրտինքը, յոգնութիւնը եւ կշեռքի կորուստը: Նաեւ, դուք կրնաք թոքախտի մանրէներ տարածել այլ մարդոց: Թոքախտը գլխաւորաբար կազդէ թոքերուն, բայց նաեւ կրնայ ազդել մարմնի այլ մասերու: Եթե չբուժուի, թոքախտը մահուան կրնայ առաջնորդել:

Մարդ ինչպէ՞ս կը վարակուի

Թոքախտի մանրէները օդին մեջ կը տարածուին, երբ գործոն թոքախտով հիւանդ մէկը կը հագայ, կը փռնգտայ, կը խնդայ, կը խօսի կամ կերգէ: Եթե դուք շնչէք թոքախտի մանրէներ ունեցող օդը, կրնաք վարակուի: Սակայն, հագուստներէ, ամաններէ, ուտելիքէ, անկողիններէ կամ գործոն թոքախտ ունեցողի մը հետ շփումէ թոքախտով չէք կրնար վարակուի:



Ի՞նչ է թոքախտի վարակումի բուժումը

Եթե թոքախտի մանրէներով վարակուած էք, կրնաք թոքախտէ հիւանդանալ: Սահկա կրնայ պատահիլ անմիջապէս կամ քանի մը տարի ետք: Թոքախտի վարակումը կրնայ բուժուիլ դեղերով, ամենէն յաճախ Isoniazid-ով: Դուք պէտք է այս դեղը առնէք վեցէն մինչեւ ինն ամսուան ընթացքին: Երկու դեղեր համադրող աւելի կարճ բուժում մը կայ, որուն պէտք է հետեւիլ շաբաթական կերպով 12 շաբաթուան ընթացքին:

Ինչո՞ւ պէտք է դեղ առնել եթե հիւանդ չեմ զգար

Դուք կրնաք գործոն թոքախտ ունենալ եթե դեղ չառնէք ձեր թոքախտի վարակումին համար: Բազմաթիւ թոքախտի մանրէներ կը սպաննուին ձեր դեղը առնելէ ետք, բայց ոմանք երկար ժամանակ ողջ կը մնան ձեր մարմնին մեջ: Որքան արեւն, որ թոքախտի մանրէներ ունիք ձեր մարմնին մեջ, անոնք կրնանք «արթննալ», բազմանալ եւ ձեզ հիւանդացնել: Եթե թոքախտի դեղ կառնէք, կարելոր է, որ ձեր դեղը վերջացնէք հետեւեալով ձեր բժիշկի կամ առողջապահական մատակարարի ցուցմունքներուն:

Ինչպէ՞ս կրնամ ճշդել, եթե թոքախտի վարակում ունիմ

Մորթի կամ արեան թոքախտի քննութիւն կատարեցէք: Եթե մորթի քննութիւն կատարէք, ձեր բժիշկին վերստին այցելեցէք երկուքէն երեք օր ետք քննութեան արդիւնքներուն համար: Եթե արեան քննութիւն կատարէք, դարմանատուն վերադառնալու պէտք չունիք ձեր արդիւնքներուն համար:

Ի՞նչ է տարբերութիւնը թոքախտի վարակումի եւ գործոն թոքախտի միջեւ	
Թոքախտի վարակում	Գործոն թոքախտ
Ախտանիշ չկայ	Զօրաւոր հագ 3 շաբաթ կամ աւելի
Հիւանդ չէք զգար	Արին կը հագայք
Մորթի կամ արեան դրական քննութիւն (սովորաբար)	Մորթի կամ արեան դրական քննութիւն (սովորաբար)
Կուրծքի ճառագայթարձակումի բնականոն է (սովորաբար)	Կուրծքի ճառագայթարձակումի բնականոն չէ (սովորաբար)
Չի կրնար թոքախտ տարածել	Ախորժակի պակաս
Գործոն թոքախտ կրնայ զարգացնել եթե բուժումը չստեղծանայ	Տկարութիւն, յոգնութիւն
	Դող, ջերմ, գիշերային քրտինք
	Կշեռքի կորուստ

Ի՞նչ կը պատահի եթե մորթի կամ արեան քննութեան արդիւնքը դրական ըլլայ

Մորթի կամ արեան քննութեան դրական արդիւնք մը սովորաբար կը նշանակէ, որ դուք վարակուած էք թոքախտի մանրէներով, բայց անպայման չի նշանակէր, որ գործոն թոքախտ ունիք: Անհրաժեշտ են այլ քննութիւններ, ինչպէս կուրծքի ճառագայթարձակում կամ խորիսի օրինակ, որպէսզի ճշդուի, եթե դուք գործոն թոքախտ ունիք:

Ե՞րբ պէտք է մորթի կամ արեան քննութիւնը կատարել:

- Դուք պէտք է թոքախտի քննութիւն կատարէք եթե
 - Գործոն թոքախտի ախտանիշեր ունիք
 - Երկար ժամանակ անցուցած էք գործոն թոքախտ ունեցողի մը հետ
 - Տկարացած դիմադրական համակարգ մը ունիք, ինչպէս HIV կամ շաքարախտ
 - Ներարկած էք սպօրինի թմրադեղեր
 - Վերջերս ԱՄՆ եկած էք Լատին Ամերիկայէն, Գարիպեան կղզիներէն, Ափրիկէէն, Ասիայէն կամ Արեւելեան Եւրոպայէն:
 - Աշխատած էք կամ մնացած էք ծերանոցի մը, տնագործերու օթեանի մը, բանտի մը կամ ուրիշ հասարակական վայրի մը մեջ: